ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻՆ
ԱՐԱՐԱՏԵԱՆ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ

Ամէն հայի սրտի համար անհուն ուրախութիւն է ապրել վերածնուած մեր հարազատ ժողովրդի ծոցում և տեսնել օրէցօր վերելքն ու ծաղկումը մեր մայր հայրենիքի, խաղաղութեան և ապահովութեան պայմաններում:

Այս պայծառ իրադրութիւնը մեծ մխիթարութիւն է նաև Հայոց Հայրապետի համար, որ տիւ և գիշեր աղօթում է Իր զաւակների բարօրութեան ու Մայր Հայաստանի երջանկութեան համար:

Առաւել մեծ է Մեր մխիթարութիւնը, երբ տեսնում ենք, թէ մեր հայրենի հողի վրայ նոր կեանք ու ծաղկում է ապրում նաև մեր նախնեաց սուրբ եկեղեցին՝ ի գլուխ ունենալով համայն մեր ազգի սրբութիւն սրբոց Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և Արարատեան պատմական թեմը, որ իր եկեղեցիներով, իր հոգևոր կեանքի զարգացումով ու ժողովրդի աճող հաւատքով կենտրոնական տեղ է գրաւում մեր եկեղեցու կեանքում և որ այսօր գտնվում է իր կեանքի մի նոր հանգրուանի առաջ:

Այո, այսօր, Աստուծոյ ողորմութեամբ, Մենք ձեզ կոչում ենք ստանձնելու բարձր ու պատասխանատու պաշտօնը Արարատեան թեմի ղեկավարութեան, իբրև առաջնորդական փոխանորդ: Մենք վստահ ենք, թէ ձեր հաւատաւոր և ուխտապահ ոգով, ձեր աստուածատուր շնորհներով ու կազմակերպական, եռանդուն աշխատանքով Դուք առաւել պիտի շէնացնէք հայրապետական թեմի եկեղեցիներն ու սրբատեղիները և առաւել աւետարանական լոյս պիտի բաշխէք մեր ժողովրդի զաւակներին, ի շինութիւն նրանց հոգիների:

Աղօթում ենք, սիրելի սրբազան, առ բարձրեալն Աստուած, որ ձեզ շնորհի տոկուն քաջառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, նաև երկնառաք ներշնչումներ ու գործելու կորով, որպէսզի լինէք «մշակ առանց ամօթոյ» ձեր կեանքով ու գործունէութեամբ, ձեր բարձր պաշտօնի կատարին:

Այս երջանիկ առիթով, ի գնահատումն ցարդ մատուցած ձեր ծառայութիւնների և ձեզ ի խրախուսանք ձեր նոր առաքելութեան մէջ, կը շնորհենք ձեզ արքութեան պատիւ, մաղթելով ամէն բարիք ի Տեառնէ և շինարար ու արդիւնաւէտ գործունէութիւն, ի փառս Հայաստանեայց առաքելական մեր սուրբ եկեղեցու:

«Այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. և որ կամիցի ի ձէնջ առաջին լինել եղիցի ամենեցուն ծառայ» (Մարկոս Ժ 44):

Օրհնեալ եղերուք ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

Տուաւ կոնդակս ի 27-ը մայիսի
1972 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,
ի մայրաքաղաքս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄ. 732

Վազգէն Ա

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ